# «Կեղծ ակադեմիզմից ազատվելու հոգեբանական պատնեշը հաղթահարել ենք»

«Հայկական լեռնաշխարհը հայոց եւ համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» խորագրով երկրորդ գիտաժողովը հրավիրելու անհրաժեշտությունը բխում էր նրանից, որ հին շրջանը հայոց պատմության ամենաբարդ ու կնճռոտ հատվածն է: Որքան էլ մեր դեմ քննադատական տարափ հնչի, մենք շարունակելու ենք մեր գիտաժողովներին հրավիրել ասելիք ունեցող մարդկանց՝ անկախ նրանց մասնագիտությունից, գիտական կոչումներից, տիտղոսներից: Կարծում եմ, կեղծ ակադեմիզմից ազատվելու հոգեբանական պատնեշն արդեն հաղթահարել ենք: Նախորդ գիտաժողովի տպագրված նյութերից միայն դրական արձագանքներ ենք ստացել, մինչդեռ շատերը մտավախություն ունեին, թե գիտաժողովի նախօրյակին գիտնականներից ոմանք կբոյկոտեն մեր մոտեցման դեմ», ասաց Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն **Աշոտ Մելքոնյանը:** Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի հովանավորությամբ ինստիտուտի նիստերի դահլիճում երեկվանից սկսվեց «Հայկական լեռնաշխարհը հայոց եւ համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» եռօրյա գիտաժողովը:

2003 թվականի աշնանը տեղի ունեցած հայագիտական միջազգային առաջին համաժողովից հետո որոշում կայացվեց 3-6 ամիսը մեկ անցկացնել մասնագիտացված գիտաժողովներ՝ հաջորդ համաժողովի քննարկմանը ներկայացնելու համար: Բացի այդ պատմության ինստիտուտը անցյալ տարվանից պետպատվերով սկսել է հայոց պատմության բազմահատորյակի հրատարակությունը, որի առաջին հատորի աշխատանքները բավականին ծանր են՝ վաղնջական պատմության կնճռոտ հիմնահարցերը հարթելու առումով: Գիտաժողովում ծավալվող բանավեճերը մասնագետներին կօգնեն հասնելու որոշակի ճշմարտության, ամբողջապես լուսաբանելու կարեւոր հիմնախնդիրներ, որոնք էական նշանակություն ունեն հայոց հոգեւոր մշակութային արժեքները բացահայտելու իմաստով:

«Գիտաժողով հրավիրել չի նշանակում լսել միմիայն բացարձակ ճշմարտություններ: Այնտեղ կարող են հնչել գիտական վարկածներ, որոնց 90 տոկոսը անընդունելի կլինի, իսկ 10 տոկոսն իր մեջ ռացիոնալ հատիկ կունենա, որն անպայման գիտաժողովին մասնակցող գիտնականներին օգտավետ կլինի հայեցակարգային ընդհանրացումներ կատարելիս», **«Ազգի»** հետ զրույցում շարունակեց Աշոտ Մելքոնյանը: Մեր հարցին, թե ինչո՞ւ ակադեմիկոս Պարիս Հերունու «Արմատներ հայոց» գիրքը լռության մատնվեց եւ դրական կամ բացասական արձագանք չգտավ պատմաբանների շրջանում, նա պատասխանեց. «Պարիս Հերունին մեր նախորդ գիտաժողովին մասնակցելու հրավեր ստացել էր, բայց չներկայացավ: Անշուշտ, մենք կցանկանայինք լսել նրա բոլոր մեկնաբանությունները, որովհետեւ հեռուստաէկրանից խոսելը մի բան է, գիտնականների հարցերին պատասխանելը՝ մեկ այլ: Երբ Հերունին ասում է, թե հայոց գրերը 10 հազար տարվա պատմություն ունեն, օրինակ, ես կկամենայի հարցնել՝ իսկ ինչո՞ւ ոչ 9 հազար 600 կամ 10 հազար 500 տարվա, կամ էլ՝ 100 հազարը ավելի լավ թիվ է: Ասելը բավարար չէ, պետք է կարողանալ այդ ամենը համոզիչ հիմնավորել: Պատկերացնում եմ, ի՞նչ կկատարվի, եթե պատմաբաններս փորձենք մտնել ռադիոֆիզիկայի բնագավառ: Բայց մենք որեւէ խնդիր չունենք, միայն կամենում ենք, որ իրենց տեսակետները հիմնավորեն:

Ոչ ոք իրավունք չունի սահմանափակելու Հերունու հետաքրքրությունների շրջանակը, բայց անթույլատրելի է, երբ նա օգտագործում է «փտած գիտնականներ, պատմաբաններ», «կաղապարված գլուխներ» արտահայտությունները», ասաց նա:

Գիտաժողովի երեկվա նիստի զեկուցումները առնչվում էին հնդեվրոպական նախահայրենիքի վարկածի քննությանը, Հայկական լեռնաշխարհի տեղանվանական համակարգին եւ հայ ազգի տեղաբնիկության հարցին, Արամ անվանը որպես հայ ժողովրդի երկրորդ էթնոնիմի, շումերական ցուցիչների հնչյունական արժեքներին, դրանց հայերեն համարժեքներին եւ այլն:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ